



21.04.15թ. N: Մ/ 1-02/671  
Ձեռք N: Միմում, 13.04.15թ.

**Դիլիջանի Օրհուս կենտրոնի  
համակարգող՝ պրն. Ա.Հարոյանին**

**Հարգելի պարոն Հարոյան,**

Ի պատասխան Ձեր 13.04.15թ. դիմումի հայտնում եմ.

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի տարածաշրջանում խմելու ջրի բարձրորակ ստորերկրյա ջրաղբյուրների բացակայության պայմաններում ջրամատակարարումը իրականացվում է մակերևութային ջրաղբյուրներից՝ Դիլիջան քաղաքը սնուցող թվով երեք մաքրման կայանների միջոցով: Մակերևութային ջրառով է պայմանավորված արտաքին գործոնների ազդեցությունը ջրի որակի կազմավորման վրա: Արդյունքում գրանցվում են ջրի որակի ցուցանիշների (զգայորոշական ցուցանիշներ, օրգանական միացություններ, ազոտ պարունակող նյութեր և այլն) զգալի սեզոնային տատանումներ:

Հատկապես գարնանային արագ ձնհալի շրջանում ստեղծվում է արտակարգ իրավիճակ ջրի մաքրման կայաններում, երբ արագ հոսող փոքր լեռնային գետերի ջրի պղտորությունը գերազանցում է մաքրման կայան մտնող ջրի որակի համար նախատեսված սահմանային նորմերը: Արդյունքում, մաքրման կայանների կառուցվածքները, անկախ տեխնոլոգիական և շահագործման ռեժիմներից, չեն հասցնում մաքրել ջուրը և ապահովել բնակչությանը մատակարարվող խմելու ջրի որակը՝ պահանջվող հիգիենիկ նորմերի համաձայն:

Այդ օրերին ջրի մաքրման կայաններից մատակարարվող ջրի պղտորումների պայմաններում ընկերության կողմից իրականացվում են հնարավոր միջոցառումները՝ ջրային բնույթի սուր վարակիչ հիվանդությունների կանխարգելման, խմելու ջրի պահանջվող որակի ապահովման համար: Ջրի մաքրման կայաններից սնվող թաղամասերի ջրամատակարարումը գտնվում է ընկերության հատուկ հսկողության տակ և հնարավորինս ամեն ինչ արվում է ջրի որակը պատշաճ մակարդակի հասցնելու և պահպանելու համար:

Ընկերության կողմից անհապաղ ձեռնարկվում են արագ արձագանքման և վերականգնողական հետևյալ միջոցառումները.

- գետային ջրընդունիչի մաքրում և ախտահանում,
- նախնական պարզաբանների լվացում և ախտահանում,
- կոագուլյացիայի կիրառում, այլումինիումի սուլֆատի և կրի ճշգրիտ դոզայավորում,
- կվարցային ավազով բեռնված ֆիլտրերի աշխատանքի հսկողության և լվացման կազմակերպում,
- մաքրված ջրի վարակազերծում և վարակազերծման հսկողության կազմակերպում,





- մաքրման բոլոր փուլերի, մաքրման կայան մտնող և մաքրված ջրի որակի մշտական լայնածավալ լաբորատոր տեխնոլոգիական հսկողություն՝ զգայորոշական, ֆիզիկաքիմիական, մանրէաբանական ցուցանիշներով:

Ջրի որակի հսկողությունը իրականացվում է Դիլիջան քաղաքում տեղակայված և ժամանակակից սարքավորումներով զինված տարածքային լաբորատորիայում: Լաբորատոր անձնակազմը ժամանակ առ ժամանակ մասնակցում է մասնագիտական դասընթացների և տիրապետում է ՀՀ-ում գործող խմելու ջրի որակի հսկողության լաբորատոր մեթոդներին: Լաբորատոր սարքավորումները Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից տարին մեկ անգամ ստուգաչափվում են:

2015թ.-ի հունվար-մարտ ամիսներին Դիլիջան քաղաքում համաձայն ջրի որակի հսկողության տարեկան ժամանակացույցի կատարվել է 76 մանրէաբանական հետազոտություն, որից 3 նմուշում հայտնաբերվել են շեղումներ ՀՀ գործող սանիտարական կանոններից և նորմերից: Շեղման պատճառը եղել է արագ ձնհալը և հորդառատ անձրևները: Մատակարարված խմելու ջուրը 96%-ով համապատասխանել է ՀՀ գործող սանիտարական կանոններին և նորմերին (տարեկան 95%-ից ոչ ցածր): Կատարվել է 12 սանիտարաքիմիական հետազոտություն, որոնք համապատասխանել են ՀՀ գործող սանիտարական կանոններին և նորմերին: Խմելու ջրի 744 նմուշում չափվել է մնացորդային քլորը, ընդունված նորմերից շեղումներ են գրանցվել 8 նմուշում, որոնք պայմանավորված են եղել քլորացնող սարքի խափանումով:

Ընկերությունը Դիլիջան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավման նպատակով կատարել է մի շարք միջոցառումներ.

1. Համաշխարհային բանկի վարկային միջոցներով 2006-2007թթ. իրականացվել է «Դիլիջան քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավման» ծրագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 303.24 մլն. դրամ:

Ջրամատակարարման համակարգերի վերակառուցման ծրագրով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ա/ վերանորոգվել են Գոլովինո և Ֆրոլով ՋՄԿ-ների շենքերը,

բ/ Գոլովինո ՋՄԿ-ում կառուցվել է  $W=50մ^3$  տարողության ֆիլտրերի լվացման ջրամբար,

գ/ փոխարինվել և վերանորոգվել են ՋՄԿ-ների տեխնոլոգիական խողովակները, փականային հանգուցները,

դ/ վերանորոգվել են պարզարանները,

ե/ վերականգնվել են քամիչների կվարցային բեռնվածքները, փոխարինվել նրանց լվացման համար նախատեսված պոմպերը,

զ/ կայաններում տեղադրվել են կոագուլյանտի և կրի դոզավորման համար նախատեսված ճշգրիտ սարքավորումներ, կազմակերպվել է լաբորատոր հսկողություն ռեագենտների դոզայավորման և մնացորդային քանակների նկատմամբ,

է/ ջրի վարակազերծման համար տեղադրվել են երկու ALDOS քլորացնող սարքեր:



2. Ընկերության սեփական միջոցներով 2010թ. կառուցվել է մոտ 4կմ ջրագծեր, ընդհանուրը ծախսվել է 12.0մլն. դրամ:

3. Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի վարկային միջոցներով 2013թ. սկսվել է «Դիլիջան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման» ծրագիրը, որով նախատեսվում է.

ա/ մագիստրալ ջրատարի կառուցում – 3.9կմ,

բ/ բաշխից ցանցի վերակառուցում – 35.0 կմ,

գ/ բազմաբնակարան և անհատական տների մուտքագծերի կառուցում – 2.3կմ,

դ/ 324 հատ ջրաչափական հորերի տեղադրում,

ե/ 500մ<sup>3</sup> տարողության ՕԿՋ-ի վերանորոգում և 300մ<sup>3</sup> տարողության ՕԿՋ-ի կառուցում,

զ/ պոմպակայանի կառուցում և այլն:

Ծրագրի արժեքը կազմում է 1315.0մլն. դրամ: Շինարարական աշխատանքների սկիզբը՝ 2013թ. սեպտեմբեր, ավարտը – 2015թ. հոկտեմբեր:

4. Ասիական Ջարգացման Բանկի վարկային միջոցներով «Ֆրոլով» ԶՄԿ-ի ջրընդունիչ կառուցվածքում նախատեսվող աշխատանքների արդյունքում կբարելավվի վերցվող ջրի քանակը և որակական ցուցանիշները: Շինարարական աշխատանքների մրցույթը ընթացքի մեջ է: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մեկ տարուց:

Հարգանքով,

Գլխավոր տնօրեն

Պ.Լորեն

Կատարողներ՝ Մ.Բելլույան, Ռ. Խաչատրյան  
Հեռ. 055 557876, 055 557891